Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ Նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«20» 08 2020թ.

ԿԱՐԳ
ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Ավանդական բժշկության համալսարանի» (այսուհետ՝ Համալսարան) արտակարգ դրության պայմաններում անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի հեռավար (առցանց) ուսուցման գործընթացի կազմակերպման և իրականացման հարաբերությունները, ինչը թույլ կտա էլեկտրոնային միջավայրի, նորարարական տեխնոլոգիաների օգտագործումը կրթության ոլորտում դարձնել առավել կանոնակարգված:
2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» 16.03.2020 թվականի N 298-Ն որոշումը, ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության 11.02.2010 թվականի «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման» կարգը հաստատելու մասին որոշումը, Համալսարանի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:
3. Հեռավար ուսուցման հիմքը կազմում են փաթեթային (քեյսային), ինտերնետ և հեռահաղորդակցային տեխնոլոգիաները: Թույլատրվում է տարբեր տեխնոլոգիաների զուգակցումը:
4. Հեռավար ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, երբ սովորողի և դասախոսի միջև անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացն իրականացվում է հիմնականում առցանց՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով:

5. Հեռավար ուսուցման կիրառման նպատակն է արտակարգ դրության պայմաններում սովորողներին կրթական ծրագրեր յուրացնելու հնարավորություն ընձեռելն է, նորարարական մեթոդների կիրառումը, ուսումնական գործընթացների ապահովումը անհրաժեշտ գործիքներով, տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների կիրառմամբ:
6. Համալսարանը սահմանված կարգով կարող է կիրառել հեռավար ուսուցման տեխնոլոգիաներ՝ դրանց համապատասխան պատրաստվածության աստիճան ունեցող ղեկավար և մանկավարժական, ուսումնաօժանդակ անձնակազմերի և հեռավար ուսուցման կազմակերպման կիրառման համար անհրաժեշտ հատուկ սարքավորումներով հագեցած տարածքների և պայմանների առկայության դեպքում:
7. Սույն կարգի դրույթները տարածվում են Համալսարանում անընդհնատ և ինտեգրացված կրթական ծրագրով ուսուցմամբ սովորողների վրա:

II. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

1. Հեռավար ուսումնական գործընթացի մասնակիցներն են՝ Համալսարանում սովորողները և պրոֆեսորադասախոսական կազմը:
2. Հեռավար ուսուցման սուբյեկտները սովորողներն ու աշխատողներն են: Սույն կարգի դրույթները պարտադիր են հեռավար ուսուցման բոլոր սուբյեկտների համար:
3. Կրթական ծառայություններ ստանալու, Համալսարանի նյութատեխնիկական բազայից օգտվելու առումով հեռավար կրթության ընթացքում սովորողները և դասախոսները ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ առկա ուսուցման ընթացքում:
4. Հեռավար կրթությամբ իրականացվող կրթական ծրագրերի բովանդակությունը չի կարող տարբերվել տվյալ առարկայի ծրագրով և չափորոշչով սահմանվածից:
5. Հեռավար կրթությամբ իրականացվող կրթական ծրագրերի բովանդակությունը չի կարող տարբերվել տվյալ առարկայի ծրագրով և չափորոշչով սահմանվածից:
6. Հեռավար ուսուցմամբ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի յուրացման նորմատիվային ժամկետները սահմանվում են յուրաքանչյուր մասնագիտության՝ համապատասխան որակավորման աստիճանի պետական կրթական չափորոշիչներով, ուսումնական պլանին համապատասխան:

7. Հեռավար ուսուցմամբ կրթական ծրագրերն իրականացվում են ուսուցման այնպիսի ձևերով, որոնք ուսուցման այլ ձևերից (առկա և հեռակա) կարող են տարբերվել ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններով, դասավանդման մեթոդներով, ուսուցման տեխնոլոգիաներով, սովորողի հետ դասախոսի աշխատանքի պարտադիր պարապմունքների ծավալով:

III. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

1. Արտակարգ դրության պայմաններում օտարերկրյա դիմորդների ընդունելությունը կարող է կազմակերպվել հեռավար, մրցութային կարգով:
2. «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրով ընդունելությունը կատարվում է Համալսարանում գործող կգի համապատասխան:

IV. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Համալսարանը՝ որպես հեռավար ուսուցում իրականացնող ուսումնական հաստատություն, սովորողներին, դասախոսներին և ուսումնաօժանդակ անձնակազմին ապահովում է անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերով (ուսումնական պլան, դասընթացի հարցաշարեր, առարկայական ծրագրեր, քննական թեստեր, մեթոդական նյութեր և այլն):
2. Անհրաժեշտության դեպքում Համալսարանը կարող է տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն:
3. Հեռավար ուսուցման գործընթացում կարևորվում են հետևյալ միջոցները.
   - ուսումնական նյութեր (էլեկտրոնային գրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, տեղեկատուներ և այլն),
   - ցանցային ուսումնամեթոդական ձեռնարկներ, համակարգչային ուսուցման համակարգ,
   - աուդիո և վիդեո ուսումնատեղեկատվական նյութեր, էլեկտրոնային գրադարաններ,
   - տեղեկատվական համակարգի և վիրտուալ իրականության հիմքի վրա հիմնված ուսուցման միջոցներ,
4. Հեռավար ուսուցման ապահովումն իրականացվում է էլեկտրոնային ուսումնամեթոդական համալիրների միջոցով:
5. Էլեկտրոնային ուսումնամեթոդական համալիրները ներառում են՝

- ուսումնական տարվա սկզբում կազմված և Համալսարանի ռեկտորի կողմից հաստատված ժամանակացույց և կատարման հաջորդականություն,
- ուսումնական պլան, առարկայական ծրագրեր,
- թեստային առաջադրանքներ՝ նախատեսված ընթացիկ և ամփոփիչ գիտելիքի ստուգման համար,
- ուսումնական դասընթացի ուսումնասիրման մեթոդական հանձնարարականներ,
- էլեկտրոնային տեղեկատվական բառարաններ, ինտերնետային կայքեր և ցանցային ռեսուրսներ,
- ինքնաստուգում և ընթացիկ ստուգում կազմակերպելու թեստեր, ուսումնական (ուսուցողական, դիդակտիկ) ձեռնարկներ,
- ընթացիկ և եզրափակիչ ստուգման հարցաշարեր, մեթոդական նյութեր, ուսումնական ու լրացուցիչ գրականություն և այլն:

6. Ուսումնամեթոդական նյութերը կարող են տեղադրվել Համալսարանի պաշտոնական կայքում կամ տրամադրվել ամբիոններին էլեկտրոնային տարբերակով:
7. Հեռավար ուսուցման գործընթացի ուսումնամեթոդական ապահովումը թարմացվում է ըստ անհրաժեշտության:
8. Հեռավար ուսուցման իրականացման ուսումնամեթոդական նյութերը ոչ պատշաճ (ուշացումներով և անհասկանալի) պատրաստելու համար պատասխանատվություն է կրում ամբիոնի վարիչը և համապատասխան դասախոսները:

V. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Հեռավար ուսուցումը իրականացվում է 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակից:
2. Հեռավար ուսուցումը կարող է դադարեցվել Համալսարանի ռեկտորի հրամանով:
3. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը (աշխատանքային պլան) կազմվում է յուրաքանչյուր կիսամյակի կամ ուսումնական տարվա համար՝ ուսումնական պլանի հիման վրա:
4. Ուսումնական պլանում նշվում են ուսումնասիրվող առարկաները (դասընթացները), մոդուլները, յուրաքանչյուր առարկային հատկացված ժամաքանակը, կրեդիտը, ստուգման և մատուցման ձևը:

5. Ուսումնական գործընթացի կազմակերպման հիմքը տվյալ կրթական ծրագրի ուսումնական պլանն ու առարկայական ծրագրերն են:
6. Հեռավար ուսուցումը կազմակերպվում է ուսումնական պլանին և առարկայական ծրագրերին համապատասխան, որոնց բոլոր պահանջները կատարած սովորողին ամփոփիչ գիտելիքների ստուգումից հետո շնորհվում է համապատասխան կրեդիտ:
7. Յուրաքանչյուր ամբիոն ուսումնական տարվա կիսամյակի սկզբին սովորողներին պարտավոր է տրամադրել տվյալ կիսամյակի համար ուսումնական պլանով նախատեսված առարկաների ինքնուրույն ուսումնասիրման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթերի փաթեթները՝ էլեկտրոնային տրբերակով:
8. Սովորողի հետ հետադարձ կապն ապահովելու համար ամբիոնները կարող են ստեղծել յուրաքանչյուր խմբի համար հատուկ առցանց խմբեր՝ համապատասխան ծածկագրով, քննարկումների, հարց ու պատասխանի համար:
9. Հեռավար ուսուցման կազմակերպման համար դասախոսները կարող են օգտագործել հեռախաղորդակցման բորոր հասանելի հարթակները և ծրագրերը:
10. Ամփոփիչ գիտելիքների ստուգումն կազմակերպվում է Համալսարանում գործող կարգի համաձայն:

VI. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Սովորողների ակադեմիական շարժունությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում գործող կարգին համապատասխան (Տե՛ս ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի N 938-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»N 1240-Ն որոշումը:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգում լրացումներ կամ փոփոխություններ իրականացվում է Համալսարանի գիտական խորհուրդի կողմից:
2. Կարգի գործունեությունը դադարեցվում է Համալսարանի Գիտական խորհիդի որոշմամբ: